

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2002 թվականի N 621
քաղ. Երևան

ԱՌԱՆՑ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ԳԱՆՁՄԱՆ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԽԱՂՈՂԻ ԿՏՐՈՆՆԵՐԻ, ԿԱՐՏՈՖԻԼԻ, ՄՊԵԼՏԱՅԻ
(ՀԱՃԱՐ), ՓԱՓՈՒԿ ՑՈՐԵՆԻ ԵՎ ՄԵՍԼԻՆ ՍԵՐՄԱՑՈՒԻ, ԳԱՐՈՒ, ՈԼՈՌԻ ԵՎ ԼՈԲՈՒ
ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(վերնագիրը լրաց 04.08.11 N 1096-Ն, փոփ. 30.07.15 N 862-Ն)

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝
ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու
մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» Հայաստանի
Հանրապետության օրենքի 1-ին հոդվածին համապատասխան՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

(նախաբանը փոփ. 30.07.15 N 862-Ն)

1. Հաստատել առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման ու գանձման՝
Հայաստանի Հանրապետություն խաղողի կտրոնների, կարտոֆիլի, սպելտայի (հաճար),
փափուկ ցորենի և մեալին սերմացուի, գարու, ոլոռի և լոբու սերմացուների ներմուծման
կարգը (կցվում է):

(1-ին կետը լրաց 04.08.11 N 1096-Ն, փոփ. 30.07.15 N 862-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի մայիսի 25-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

Հաստատված է
ՀՀ կառավարության 2002 թվականի
մայիսի 25-ի N 621 որոշմամբ

Կ Ա Ր Գ

ԱՌԱՆՑ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ԳԱՆՁՄԱՆ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԽԱՂՈՂԻ ԿՏՐՈՆՆԵՐԻ, ԿԱՐՏՈՖԻԼԻ, ՄՊԵԼՏԱՅԻ
(ՀԱՃԱՐ), ՓԱՓՈՒԿ ՑՈՐԵՆԻ ԵՎ ՄԵՍԼԻՆ ՍԵՐՄԱՑՈՒԻ, ԳԱՐՈՒ, ՈԼՈՌԻ ԵՎ ԼՈԲՈՒ
ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
(վերնագիրը լրաց 04.08.11 N 1096-Ն, փոփ. 30.07.15 N 862-Ն)

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածին համապատասխան՝ առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման և գանձման՝ խաղողի կտրոնների, կարտոֆիլի, սպելտայի (հաճար), փափուկ ցորենի և մեալին սերմացուի, գարու, ոլոռի և լոբու սերմացուների Հայաստանի Հանրապետություն ներմուծման գործընթացը:

(1-ին կետը լրաց 04.08.11 N 1096-Ն, փոփ. 30.07.15 N 862-Ն)

2. Մաքսային կամ հարկային մարմինները Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքը որպես սերմացու են դիտում միայն այն դեպքում, եթե դրան ուղեկից փաստաթղթերում առկա են սերմացուի սորտայնությունը, դասայնությունը և որակը վկայող՝ առաքող երկրի իրավասու կազմակերպության կամ միջազգային ճանաչում ունեցող այլ իրավասու կազմակերպության կողմից տրված վկայական (հավաստագիր):

(2-րդ կետը լրաց 30.07.15 N 862-Ն)

2.1. Առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման ու գանձման՝ խաղողի կտրոնների և կարտոֆիլի սերմացուի ներկրման համար բավարար հիմք է առաքող երկրի հավաստագրի առկայությունը:

(2.1-ին կետը լրաց 05.06.03 N 682-Ն, 30.07.15 N 862-Ն)

3. Սպելտայի, փափուկ ցորենի և մեալին սերմացուի, գարու, ոլոռի և լոբու սերմացուների ներմուծման համար մաքսային մարմնի փաստաթղթային ստուգման դրական արդյունքի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից այդ ապրանքների ներմուծման դեպքում՝ ապրանք փոխադրողը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության եզրակացությունն ստանալու նպատակով, «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սերմերի որակի ստուգման հավատարմագրված լաբորատորիա (այսուհետև՝ լաբորատորիա) է ներկայացնում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սերմացուների ուղեկից փաստաթղթերի պատճենները՝ փորձանմուշներ վերցնելու և լաբորատոր փորձաքննություն կատարելու համար:

(3-րդ կետը լրաց 05.06.03 N 682-Ն, 04.08.11 N 1096-Ն, խմբ. 30.07.15 N 862-Ն)

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՍՊԵԼՏԱՅԻ, ՓԱՓՈՒԿ ՑՈՐԵՆԻ ԵՎ ՄԵՍԼԻՆ ՍԵՐՄԱՑՈՒԻ, ԳԱՐՈՒ, ՈԼՈՌԻ ԵՎ ԼՈՒՐԻ ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

(վերնագիրը լրաց 04.08.11 N 1096-Ն, փոփ. 30.07.15 N 862-Ն)

4. Լաբորատորիայի մասնագետը սերմացուների որակն ստուգելու նպատակով փորձանմուշները վերցնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2000

թվականի դեկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում մաքսային ձևակերպումների նպատակով ապրանքներից նմուշներ և փորձանմուշներ վերցնելու կարգը հաստատելու մասին» N 900 որոշմամբ հաստատված կարգով: Փափուկ ցորենի և մեալին սերմացուի, գարու, ոլոռի և լոբու սերմացուների որակի լաբորատոր փորձաքննությունն իրականացվում է 2 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ սպելտայինը (հաճար)՝ 4 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին կազմվում է արձանագրություն՝ լաբորատորիայի մասնագետների (կատարողներ) և վարիչի ստորագրությամբ, 3 օրինակից:

(4-րդ կետը փոփ. 05.06.03 N 682- Ն, 30.07.15 N 862- Ն)

5. Արձանագրության 2 օրինակը, լաբորատոր փորձաքննության տվյալների և ապրանքի ուղեկից փաստաթղթերի պատճենների հետ միասին ներկայացվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, իսկ լաբորատոր փորձաքննության տվյալների մեկ (վերջին) օրինակը պահվում է լաբորատորիայում:

**III. ԱՌԱՆՑ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ԳԱՆՁՄԱՆ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՊԵՆՏԱՅԻ, ՓԱՓՈՒԿ ՅՈՐԵՆԻ ԵՎ ՄԵՍԼԻՆ
ՍԵՐՄԱՑՈՒԻ, ԳԱՐՈՒ, ՈԼՈՌԻ ԵՎ ԼՈՒՐՈՒ ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ՀԱՄԱՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ**

(վերնագիրը լրաց. 04.08.11 N 1096- Ն, փոփ. 30.07.15 N 862- Ն)

6. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը սերմացուների ուղեբեռների ուղեկից փաստաթղթերը և լաբորատոր փորձաքննության տվյալներն ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում տալիս է դրական եզրակացություն (ձևը կցվում է), եթե՝

ա) *(ենթակետն ուժը կորցրել է 05.06.03 N 682- Ն)*

բ) ըստ լաբորատորիայի պաշտոնական տվյալների՝ տվյալ սերմացուի որակի ցուցանիշները համապատասխանում են ընդունված չափանիշներին.

գ) *(ենթակետն ուժը կորցրել է 05.06.03 N 682- Ն)*

(6-րդ կետը փոփ. 05.06.03 N 682- Ն)

7. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության եզրակացության և լաբորատոր փորձաքննության տվյալների առաջին օրինակը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններ, իսկ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծման դեպքում՝ հարկային մարմիններ՝ ապրանքի մաքսային ձևակերպման համար:

(7-րդ կետը լրաց. 30.07.15 N 862- Ն)

8. *(կետն ուժը կորցրել է 05.06.03 N 682- Ն)*

**IV. ԱՌԱՆՑ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՊԵՆՏԱՅԻ, ՓԱՓՈՒԿ ՅՈՐԵՆԻ ԵՎ ՄԵՍԼԻՆ**

| | | | | | | | |
|----|---|---|--|--|--|--|-------------|
| | | | | | | | պահանջներին |
| 1. | <i>(տողը հանվել է 30.07.15 N 862-Ն)</i> | | | | | | |
| 2. | 1001 91 100 0 | Մպելտա | | | | | |
| 3. | 1003 10 000 0 | Գարի | | | | | |
| 4. | 1001 91 200 0 | Փափուկ ցորեն և մեյլին սերմացու | | | | | |
| 5. | <i>(տողը հանվել է 30.07.15 N 862-Ն)</i> | | | | | | |
| 6. | <i>(տողը հանվել է 30.07.15 N 862-Ն)</i> | | | | | | |
| 7. | <i>(տողը հանվել է 30.07.15 N 862-Ն)</i> | | | | | | |
| 8. | 0713 10 100 0 | Ոլոռ՝ ցանքի համար | | | | | |
| 9. | 0713 33 100 0 | Լոբի՝ ցանքի համար | | | | | |

Եզրակացություն՝

1. Ենթակա է որպես սերմացու ներմուծման:
2. Ենթակա չէ որպես սերմացու ներմուծման:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

_____ 200__ թ.

Կ. Տ.

*(ձևը լրաց 04.08.11 N 1096-Ն, փոփ. 25.04.13 N 438-Ն, փոփ., լրաց 30.07.15 N 862-Ն)
(հավելվածը լրաց, փոփ. 05.06.03 N 682-Ն, լրաց 04.08.11 N 1096-Ն, փոփ. 25.04.13 N 438-Ն, փոփ., լրաց, խմբ. 30.07.15 N 862-Ն)*